

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարւան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.
Թիֆլիսում գրվում են միամիայն խմբագրատան մէջ.
Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.



ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Ուղարկութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ազատեցէք մտաւորութիւնից.—ԵՆՐՔԻՆ ՏԵ-
ՍՈՒԹԻՒՆ. Նամակ երեւանից. Նամակ Շու-
շու գաւառից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պաշտօնական հաղորդագրու-
թիւն. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒ-
ԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Չինաստան և
Եւրոպա.

ԱԶԱՏԵՑԷՔ ՄՈՒՍՏՈՒԹԻՒՆԻՑ

Մեր հեղինակներն մենք չենք ճանա-
չում—ահա մեր հասարակութեան մէջ
նկատվող սովորական երեւոյթներից մէկը:
Շատերը գիտեն, որ եղել են Նազարեան,
Նալբանդեան, Արովեան և ուրիշներ, բայց
այդ շատերից միայն շատ քիչը կարողացել
է կարգաւ այդ հեղինակների գրուածներ-
ը և իսկապէս ծանօթ լինել նրանց եր-
կասիրութիւններին: Այդ շատերը ունեն
միայն մի հարեանցի տեղեկութիւն հեղի-
նակների մասին և այն էլ ձեռք բերած
պտտող լուրերից և ընթացիկ գրականու-
թեան ակնարկներից:

Ընթերցող հասարակութիւնը կարողու-
թիւն չունի ծանօթանալ իր հեղինակնե-
րի հետ, որովհետեւ նրանց գրուածները
առանձին չեն տպւած, կամ եթէ առաջին
հրատարակութիւնները սպառված են չեն
գտնվել մարդիկ, որոնք ձեռնարկել են երկ-
րորդ հրատարակութիւնը: Ո՞րտեղից ծանօ-
թանալ ընթերցողը, օրինակ, Նազարեանի
և Նալբանդեանի հետ: Միթէ հեշտ է
ձեռք բերել «Հիւսիսամիայլ» ամսագրի հա-
մարտերը, որոնց լիակատար ժողովածուն
համարվում է մի հազարապիտ բան մեր
օրերում: Ընթերցողը բաւականանում է
մի երկու ոտանաւորով, որոնց նա պատա-
հում է երգարաններում և ձեռնարկնե-
րում: Նազարեանի ամբողջ հրապարա-
կախօսական և գրական գործունէութիւ-
նից մեծամասնութիւնը գիտէ միայն նրա
«Մայրենի լեզու», մայրենի բարբառը: Այդ-
պէս և ուրիշները:

Կանցնի հեղինակի մահից յետոյ մի յի-
սուն տարի և ամեն մարդ իրաւունք կը
ստանայ հրատարակել նրա գրուածները:
Բայց այն ժամանակ գուցէ ընթերցողներ
չը գտնվեն այդ գրուածների համար: Ժա-
մանակը անցնում է, ժամանակի հետ
փոխվում են հանգամանքները և հաս-
րակութեան պահանջները: Այն գրուածքը,
որ յիսուն, քառասուն, երեսուն տարի ա-
ռաջ հետաքրքրական էր և յուզիչ, կորց-

նում է իր ոյժը և նշանակութիւնը և
ժամանակակից հրատապ բնաւորութիւնից
նա հեռանում է և ստանում միայն պատ-
մական նշանակութիւն:

Նրդիծարան Պարոնեանի գրուածքները
մի առանձին բաղդով հրատարակվելից հե-
ղինակի մահից յետոյ շատ շուտով և այժմ
գտնվում են ընթերցող հասարակութեան
ձեռքին, շարժելով կենդանի հետաքրքրու-
թիւն, որ նպաստում է հեղինակի գրու-
ածքների լայն տարածման: Նրեակայե-
ցէք, որ այդ աշխատութիւնները երկար
ժամանակ չը հրատարակվելին և միայն
լոյս տեսնելից դիցուք մի քան տարուց
յետոյ: Զարմանալի չէ, եթէ նրանք այն
ժամանակ ոչ մի տպաւորութիւն չը գոր-
ծէին և շատ քիչ տարածվէին: Մենք այժմ
արդէն նկատում ենք, որ «Ազգային ջոջե-
րը» և «Հոսհոսի ձեռնատարը» կամայ-
կամայ կորցնում են իրանց ժամանակակից
հետաքրքրութիւնը, իսկ «Մեծապատիւ
մուրացիները» և «Բաղդասաւ Սղբարը»
պահպանում են ոյժ շնորհիւ այն բանի,
որ նրանց մէջ դուրս բերված տիպերը դեռ
կենդանի են մեր հասարակութեան մէջ:

Ինչպէս յայտնի է, Արովեանի աշխա-
տութիւնները լոյս տեսան հեղինակի մա-
հից յետոյ: Միայն տարի անցնելուց յետոյ:
Հայ յիսուն տարի անցնելուց յետոյ: Այդ-
քան ժամանակ անցնելուց յետոյ դժուար էր
ենթադրել, որ ընթերցող հասարակու-
թիւնը առանձին ազահութեամբ վրա ընկ-
ներ իր թէև սիրելի, բայց արդէն հնացած
հեղինակի գրուածքների վրա: Եւ զիտո-
ղութիւնը ցոյց է տալիս, որ Արովեանի
ժողովածուն գտնվող է սպառվում: Բայց
այդ ժողովածուն հրատարակութիւնը մի
նոր արգելադիր հանգամանք է հեղինա-
կի գրուածքների տարածման համար: Հրա-
տարակիչները յայտնել են, որ ժողովածուից
գոյացած արդիւնքը պէտք է հասնի Ար-
ովեանի ժառանգներին և այդպիսով նախ-
կին յիսուն տարվա իրաւարանական ար-
գելքի վրա աւելացրել են մի նոր, բարդա-
կան արգելք, որ խանգարում է նոր հրա-
տարակութիւնների ձեռնարկելուն: Ինչու
չը փորձել հրատարակելու Արովեանի գը-
րուածները աւելի կատարեալ, աւելի էփան
և ընթերցողի համար աւելի յարմարեց-
րած ձևերով:

Հեղինակի գրուածքները էփան և լաւ
հրատարակված ձևով ընթերցողի ձեռքը
ապր արդէն ինքն ըստ ինքեան մի հական
և գեղեցիկ գործ է, որ պէտք է գերաւիշուէր
ուրիշ հաշիւների վրա:

Տուէք հասարակութեանը իր հեղինակ-
ների գրուածքները որքան կարելի է շու-
տով, որպէս զի նրանց մտաւոր արդիւ-
նաբերութիւնը կատարէ իրական և հական
գեր, բանի նա պահպանել է ժամանակակից
ոյժ և նշանակութիւն: Այդպիսով թէ
հոգովի հասարակութիւնը և թէ կը վար-
ձատրվի բարոյապէս հեղինակը, որը աշ-
խատել է ազգեցութիւն գործելու և հա-
սարակութեանը օգտուէտ լինելու նպա-
տակով:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԵՐԵՎԱՆԻՑ

Յունիսի 6-ին

Ստացված է երկու կօնդակ վեհապառ կա-
թողիկոսից. մէկով հրամայվում է թեմի փո-
խանորդ Սուքիաս արքեպիսկոպոսին կազմա-
լուծված հրատարակել թեմական դպրոցի ու-
սուցչական խումբը եւ՝ ըստ կրկնակի միջնոր-
դութեան նոյն փոխանորդի՝ սահմանել հոգա-
բարձական նոր ընտրութիւններ: Այնպէս որ,
բարձական նոր ընտրութիւնները միայն որ,
ի նկատի առնելով ամառանոց գնալու օրերի
մերձաւորութիւնը, Սուքիաս արքեպիսկոպոսը,
առանց ժամանակ կորցնելու, նոյն օրն անմի-
ջապէս ժողովում է քաղաքի բոլոր քահանա-
ներին իր մօտ եւ պատուիրում է իւրաքան-
չիւրին անուանական ցուցակով իմաց տալ ի-
րանց բոլոր ծխականներին առաջիկայ կիրա-
կի օրը ժողովվելու իրանց ծխական եկեղեցին
և կատարելու պատգամաւորների ընտրու-
թիւնը: Ապա պատգամաւորները, առաջնորդի
նախադահութեամբ, կը կատարեն հոգաբարձու-
ների ընտրութիւնը: Այս անգամ կօնդակով
պատուիրած է ընտրել 8 հոգաբարձու, որոնցից
2-ը քահանայ եւ 6 էլ աշխարհական:

Այս կօնդակով փարատվում են այն տխուր
լուրերը, որոնք գտնվում էին ընտրողական
սկզբունքի վերանալը եւ հոգաբարձուներ նա-
նակելու խտտելի նորմութիւնները, ինչպէս
երեւում է, այս անգամ եւս անհաշիւների
լարած որոգայթն ընդդէմ ընտրողական սկզ-
բունքների չափովից. ուրախութեամբ արձա-
նագրում ենք, որ այս խնդրում պատուաւոր
գեր է խաղացել երեւանի փոխանորդ Սուքիաս
արքեպիսկոպոսը՝ թէ բերանացի եւ թէ կրկի-
նակի յայտարարութիւններով այդ բանի մասին
խնդրելով կաթողիկոսին կօնդակով թէ հրա-
հանգութիւններ են տրվում ընտրութիւնը ինչ-
պէս տանելու մասին եւ թէ յորդոր է կար-
դացվում ժողովրդին սիրով ու լրջմտութեամբ
վերաբերվելու: Յուսանք եւ սպասենք, որ վեր-

ջին երկու անշնորք տետուհների՝ բօխիկ Սի-
մէօն Շահնազարեանցի և մանաւանդ վատապի-
շատակ Բեհիկ վարդապետի արարքները բուա-
կան կը սթափեցնեն երեւանցիներին...

Երկրորդ կօնդակով կաթողիկոսը օրհնում է
քաղաքիս նոր եկեղեցու շինութեան համար
աշխատող հոգաբարձուներին եւ շինութեանը
նուիրաբերութիւններով նպաստող բոլոր ազ-
գայիներին: Այս կօնդակով կարգապահու է ա-
ռաջիկայ չարաթ օրը, երբ կատարվելու է նո-
րած եկեղեցու տօնը: Ինչպէս յայտնի է, այդ
եկեղեցին կրում է ս. Գրիգոր Լուսաւորչի ա-
նունը, իսկ ամսիս 10-ին, չարաթ օրը՝ Լու-
սաւորչի վերապից իջնելու յիշատակն է. պա-
տարադիչ լինելու է ինքը առաջնորդը, որ
այնքան նպատակաւորաւոր կերպով կարգադրել
է այդ նոր եկեղեցու ծխական ժողովուրդը լի-
նելու եւ քահանայ ունենալու խնդիրը: Մենք
չիշտում ենք այս խնդրի վրա, որովհետեւ մի
ժամանակ (եւ հէնց այժմ) սա խիստ զբաղեց-
նում էր այնտեղ քահանայ ձեռնադրվելու ա-
խորժակ ունեցող արքայաւորներին: Փոխանորդը
տուել է այն եկեղեցուն մի ժապաւինված մա-
ռեան, որ իւրաքանչիւր մարդ, որն ուզում է
նոր եկեղեցու ծխական ժողովուրդը լինել, պի-
տի ստորագրվի իր ձեռքով. երբ ստորագրվող-
ների թիւը կը հասնի 200-ի, այն ժամանակ
կը հրաւիրվեն ծխականներ եւ կարգա-
դրելու ծխական քահանաների խնդիրը: Իսկ
առաջով, մինչեւ ծխականների թիւը 200-ի
հասնելը, նոր եկեղեցի յաճախողները կը հա-
մարվեն ժամաւորներ, ինչպէս եւ այնտեղ առ-
տուածպաշտութիւն կատարող քահանաները
ժամանակաւոր պաշտօնակատարներ:

Միթերաբական երեւոյթ պէտք է համարել,
որ կան դեռ եւս մեր կուսակազմի հոգեւորական-
ների մէջ ընտրողական սկզբունքի կուսակից-
ներ, բայց աւելի միթերաբական եւ արդիւնա-
ւոր կը հանդիսանար նա, ով կուսակից լինե-
լու հետ, կը ջանալ ժողովուրդին այդ սկզբուն-
քի վեհութիւնը, օգտակարութիւնը հասկացնե-
լու եւ օրինակութեամբ գործադրելու մէջ
վարժեցնելու, առաջնորդելու:

Դիտող

ՆԱՄԱԿ ԵՐԵՎԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

Թաղար գիւղ, մայիսի 30-ին

Մինչեւ ամսիս 15-ը մեզ մօտ կանոնաւոր
անձրեւներ էին տեղում, բայց 15-ից յետոյ
սկսվեցին յորդաւառ անձրեւներ, որոնք քիչ
վնասներ չը հասցրին գիւղացիներին, քչելով
կամուրջներ, տնային կենդանիներ, չերամա-
նոցներ եւ այլն եւ այլն... Թէեւ այդպէս, բայց
դարձեալ արտերը տափարակ տեղերում, որոնք

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՉԻՆԱՍՏԱՆԻ ԵՒ ԵՒՐՈՊԱ

Օրվայ հերոսը «Մեծ բռնեցքն» է: Դա մի
կազմակերպութիւն է, որ Չինաստանը հանում
է եւրօպական տիրապետութեան դէմ, եւրօ-
պացիների այն խաղաղ նուաճման դէմ, որ
վերջին տարիները կատարվում էր ամբողջ աշ-
խարհի աչքի առաջ: Չինաստանը եւ եւրօպան
խաբի աչքի առաջ: Չինաստանը եւ եւրօպան
չառ անգամ են ընդհարվել միմեանց հետ, ա-
ռաջին իր առանձնութիւնը պահպանելու հա-
մար, իր չինական պատերի մէջ ամփոփված
մնալու համար, իսկ երկրորդը՝ այդ պատերը
պատուելու եւ երկնային պետութեան խորքերը
մանկու համար: Հետաքրքրական է, թէ եւ-
րօպան ինչպէս վերջնականապէս կտրեց չի-
նական յամաւորութիւնը: Պատմութեան այդ էջի
հետ, ի նկատի ունենալով օրվայ արիւնտ
դէպքերը Չինաստանում, մենք հարկաւոր ենք
համարում ծանօթացնել մեր ընթերցողներին,
օգտվելով «Русскія Вѣд.» լրագրում տպված
մի ընդարձակ յօդուածից:

1856 թւականին Հուան-սի նահանգում մահ-
վան պատի ենթարկվեց մի ֆրանսիացի մի-
սիօնար: Չինաստանի հետ կնքած դաշնագրու-
թեան համաձայն՝ միսիօնարի դատին ներկայ
պիտի լինէր հիւպատոսը. բայց այդ պահանջը
չէր կատարված: Ի՞նչ անցած՝ ձեռքարկվեց
գետի վրա մի նաւակ, որ կրում էր անգլիա-
կան դրօշակ եւ որի նաւապետը անգլիացի էր:
Չինական պաշտօնեան պոկեց անգլիական զը-
րօշակը եւ բանտարկեց նաւաստիներին: Անգ-
լիացիները պահանջեցին, որ իրանց յանձնվին
կալանաւորվածները եւ ընդհանուր նահանգա-
պետը դրաւոր կերպով ներողութիւն խնդրէ:
Առաջին պահանջը կատարվեց, իսկ երկրորդը
մերժման արժանացաւ: Այդ պատճառով Անգ-
լիան, համաձայնութիւն կայացնելով ֆրանսիա-
յի հետ, վճեց միասին բաւարարութիւն ստա-
նալ դէպքի ոյժով: 1857 թւի դեկտեմ-
բերի 29-ին, զաշխակից զօրքը գրաւեց
Կանտոն քաղաքը եւ Պէյ-խօ գետի բերանի
պատերազմական մարտիոցները, այնուհետեւ
դաշնակիցների պատերազմական նաւակները
այդ գետով գնացին դէպի Տեանցվին: Չինաց
կառավարութիւնը շտապեց դաշնագիր կապել
յարձակվողների հետ եւ այդ դաշնագիր հա-
տատուութիւնը պիտի տեղի ունենար մի տար-
վայ ընթացքում Պէյկինի մէջ:

Բայց հէնց որ անգլո-ֆրանսիական զօրքը
հեռաւ չինական ջրերից, հէնց որ Պէյկին
ազատվեց իր մէջ եւրօպական զօրքեր տեսնե-
լու վտանգից, բողբոջեցին պալատում նորից
զուլու բարձրացրեց այն հին կուսակցութիւնը,
որ թշնամի էր եւրօպայիկներին: Իսկ սկսեց
պահանջել, որ եւրօպացիները դուրս ինչդվին
երկրից, թէեւ այդ պատճառով հարկաւոր լինի
նոյն իսկ պատերազմ սկսել: Այդ հին կուսակ-
ցութեան ներկայացուցիչն էր մօնգօյական իշ-
խան Սան-կօ-լին-սին. նա ներկայացրեց բող-
բիխանին մի գեկուցադրել, որի մէջ ապացու-
ցանում էր, թէ Չինաստանը եւրօպացիների
հետ յարաբերութիւն ունենալուց անթիւ վը-
տանգների եւ դժբաղդութիւնների պիտի են-
թարկվի: Մասնաւոր անելով, որ եւրօպայում
այդ պետութիւնները արդէն կանգն են բոլոր
թոյլ ազգութիւնները, իշխանը գուշակում էր,
որ ճայը օտարերկրեայ ապստամբները, որոնք
այնպէս են ապրում կարծես թէ չունեն սե-
րական օջախ եւ օրէնքներ, Չինաստանում
որս են որոնում եւ յայտնի չէ թէ ուր կանգ
կառնեն Համարելով Չինաստանը մի թոյլ եւր-
կիր, նրանք ուզում են կրանք նրան: Ապա
իշխանը, ցոյց տալով չինական ազգի եւ պաշ-
տօնեաների պակասութիւնները, ջերմապէս
պաշտպանում էր Չինաստանի անկախութիւնը

եւ համոզում էր բողբոջեցին թոյլ չը տալ, որ
Անգլիայի ներկայացուցիչ լինի Պէյկինում, զը-
կել եւրօպացիներին բոլոր արտօնութիւններից,
որպէս զի կայսրութիւնը վերջնական կորստի
չը մօտավի: Եթէ թոյլ տրվի անգլիական ներ-
կայացուցչին ապրել Պէյկինում, այն ժամանակ
նա կը սկսէ խռովել կառավարութեան ներ-
քին գործերի մէջ, ամեն բանից իր համար
միայն շահ գուրս կը բերէ. չինական ժողո-
վուրդը կաղքատանայ, որովհետեւ եւրօպացի-
ները դուրս կը ծնեն երկրի ամբողջ հարստու-
թիւնը. եւրօպացիները ներս կը մտնեն իրանց
կրօնը, կը կառուցանեն իրանց եկեղեցիները
եւ Կօնֆուցիայի տաճարները ծաղրի եւ ատե-
լութեան կը մատնվեն. եւրօպացիները տէրեր
կը կանան, իսկ չինացիները՝ ստրուկներ:

Այդ գեկուցադրել անգլին տպաւորութիւն
գործեց կայսրի եւ արքունիքի վրա: Իսկոյն
հրաժանեց արձակվեցան Պէյ-խօ գետի ափերը
ամբայնելու, զօրքեր պատրաստելու մասին:
Մի եւ նոյն ժամանակ Շանգհայ ուղարկվեցան
չինացի երկու պատգամաւորներ, որոնք պիտի
համոզէին անգլիական եւ ֆրանսիական դես-
պաններին չը գնալ Պէյկին, այլ դաշնագրու-
թեան վաւերացումը կատարել Շանգհայում:
Սակայն դեսպանները ուշադրութիւն չը դարձ-
րին կառավարութեան առաւելութիւնների վրա

ծորերի մօտ չէին, շատ առատ հունձ էին խոտանում:

Բայց մայիսը, որ մօտենում է, գիւղացու սիրտը տրոփում է. մայիսն է, որ վնաս է գիւղացու բազմի:

Մայիսի 28-ը մի չարագուշակ օր էր. դեռ առաւօտվանից երկինքը շատ պայծառ էր: Ամպի նշով չէր կար: Այդպէս շարունակվեց մինչև երեկոյան ժամը 7¹/₂, իսկ յետոյ երկինքը ծածկվեց ամպակոյտերով: Լավից որոտմունքի առաջին դուռը, որին յաջորդեց կարկուտ փարկուտը տեսեց 1/2 ժամ: Այդ կէս ժամվայ մէջ կարկուտը ամայայեցեց ցանքերի ամբողջ տարածութիւններ, այգիներ, այնպէս որ կարծէք բոլորովին ոչ վարած, ոչ ցանած է եղել եւ գիւղացին այդ բոլորի վրա չէ դրել իր արեւն քրտինքը: Կարկուտի վնասով եւ հետեւեալ գիւղերը՝ Թաղար, Ներքին-Թաղար, Վերին-Թաղար, Շինար, Ագոն, Դաշար, Գիւմուշար, Շիւսի, Զարկար, Մահմեդու եւ Դովաթար: Առաջին 5 գիւղերը հայաբնակ են, իսկ վերջին 5-ը՝ թրքաբնակ: Վնասը հարկու հազարներով են հաշուում:

Կարկուտի մեծութիւնը հաւի ձուկի մեծ է եղել: Մի քանի տեղ կշռել են մէկը, մի փունտ է եղել, ասում են եւ աւել:

Այսպէս ուրեմն, վնասված գիւղացիները այս տարի զրկված կը լինեն կենսական միջոցներէ: Նրանք յուսահատ դրութեան մէջ են: Շարունակ գիւմուն են գաւառական իշխանութեան, որ գնան տեսնեն իրանց վնասները: Ամեն տեղից յոյսները կորված, միմիայն իրանց յոյսը դրել են կառավարութեան վրա: Գիւղի մօտ սրանից մօտ 4 տարի առաջ քամի մայր է գլորել մի առաջին ընկուզենի: Գիւղացիները այդ ծառը սրբաբնակ են: Ամեն օր կանայք խմբերով գնում են այդ տեղը եւ ծառի վրա մօմեր վառում ու աղաչում: Աստուծուն, որ նա մնացածը իրանց բաշխէ: Այսօր էլ մի քանի մարդիկ փող էին ժողովում մատաղներ առնելու ու մորթելու նոյն նպատակով: Մի քանի կանայք էլ շարունակ երազներ են տեսնում, թէ աշխարհիս վերջը մօտեցել է:

Ամբոխի յուսահատութեան կատարեալ պատկեր: Հ. Կոստանդնուպոլիս

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ հաղորդում ենք, որ երկրագործութեան միջնորդի օգնական Ա. Ստեփան, նախ քան Անդրկովկաս գալը, կայացել է Հիւսիսային Կովկասի հանքային ջրերը եւ կը քննէ նրանց չափազանցութեան վերաբերեալ խնդիրները: Անդրկովկասում Ստեփան կայացել է Սակարի եւ Ագայանի ամբիկական վազերի սնկարանները, կուսումնասիրել ֆիլոսոֆիային վերաբերեալ բոլոր խնդիրները եւ կը ծանօթանայ երկրագործութեան միջնորդութեան միւս հիմնարկութիւնների գործունէութեան հետ:

Մենք յայտնել էինք, որ հրատարակվեց Բարձրագոյն ուկրա Մանրկովկասի գիւղացիների հողային իրաւունքների եւ գիւղական բարեկարգութեան մասին: Շուտով պէտք է կազմակերպվեն առանձին հողաշտիական խմբեր, որոնք պէտք է զբաղվեն գիւղական հողերի ուսումնասիրութեան եւ հողերի պլան-

եւ անդլո-ֆրանսական նաւաստարմը գնաց Տաւուշ: Մովսիսեանը մի օֆիցէր ուղարկեց ամբողջ օրվէս զի իրանց տայ չինական իշխանութիւններին թէ զեպանները եկել են: Բայց օֆիցէրը չը կարողացաւ ասի իշխել, որովհետեւ ամբողջ էր զինված մարդկանցով, որոնք յայտնեցին թէ իրանց յանձնված է պաշտպանել երկիրը ծովահէնների եւ ապստամբների յարձակումներից: Նաւաստարմը ի վերջոյ վճռեց զօրով մտնել գետը. բայց յայտնի դարձաւ, որ գետաբերանը փակված է երեք շարք արգելքներով: Դրանցից երկուսը քանդվեցին նաւաստանների ձեռքով, բայց երբ սկսում էին երրորդ շարքն էլ քանդել, Տակուի մարտիկները կրակ սկսեցին նաւերի դէմ, որոնք նոյնպէս սկսեցին ուղարկուի մարտիկները: Պատերազմը կատարեալ էր. եւրօպական նաւերից զօրքեր ասի իշխան, բայց չինական ուժերը վնասել էին մի քանի նաւեր, զօրքերը մեծ վնասել կրեցին, ուստի եւ զեպանները, թողնելով ասի իշխելու եւ ոյժով Տակուին գրաւելու միտքը, նաւաստարմը յետ քաշել տուին եւ վերադարձան Շանհայ:

Այդ յաղթութիւնը չինացիներին թեւ տուեց եւ գոռոզութեան վերջին ծայրին հասցրեց նրանց: Բօգդիսիանի հրատարակած մի հրովարտակի մէջ ամբողջ մեղքը գցվում էր եւ-

ները կազմելու գործով: Այդ խմբերի գործունէութեան եւ Բարձրագոյն հրամանի ի կատար ածելու գործնական պայմանները մշակելու նպատակով չուտով կը կազմվի մի յատուկ յանձնաժողով երկրագործութեան միջնորդի կողմից: Սեպտեմբերի 1-ին յանձնաժողովը կ'աշխատէ:

Մենք ստացանք Լեւոն Սարգսեանցի «Հին ցար» գրքով, որ տպված է Մօսկվայում: Այդ գրքովի մէջ հաւաքված է հնդկական գրած եւ զանազան ժամանակ «Մշակ» լրագրի մէջ զետեղված հրապարակաբանական մի քանի յօդուածներ, որոնք վերաբերում են հայ հոգեւորականութեան ներկայ վիճակին եւ ներքին շարժումն այնպիսի պայմաններ, որոնք կազմում են հիմնական շտապներ եւ կապված են կենսաթոշակի հետ:

Կանանց գործունէութեան ասպարէզները օրից օր աւելանում են. Բարձրագոյն թոյլատրված է կանանց այտուհետեւ պաշտօններ ստանձնել արդարագրաւորութեան միջնորդութեան հիմնարկութիւնների մէջ, սակայն դեռ չեն ստրկվում նրանց այնպիսի պայմաններ, որոնք կազմում են հիմնական շտապներ եւ կապված են կենսաթոշակի հետ:

Պետերբուրգում հիմնվեց Արեւելքի ուսումնասիրութեան մի նոր ընկերութիւն: Ներկայ յունիսի 6-ին տեղի ունեցաւ հիմնադրիչների ժողով առեւտրի դեպարտամենտի գերիւսթօր վ. Կովալեւսկու նախագահութեամբ: Գրվեցին արդէն անդամներ 140 հոգի: Ընկերութեան վարչութիւնը պէտք է լինի Պետերբուրգում, իսկ բաժնիները ապագայում կը բաշխեն Մօսկվայ, Վարշավա, Լօձի, Նիժնի-Նովգորոդ, Ռուսիոյ, Երեւան, Բուխարա, իրանական եւ մի քանի ուրիշ քաղաքներում: Ընկերութեան պատուաւոր անդամներ ընտրվեցին ֆինանսների եւ զինուորական միջնորդների վիստա եւ Կուրօպետիկ, աշխարհագրական ընկերութեան նախագահ Պ. Սեմեօնով, գեպան Ա. Նելիզով եւ ուրիշ բարձր դիրք ունեցող անձինք:

Մեզ հաղորդում են, որ ամսիս 10-ին վերջացան թիֆլիսի Ալեքսանդրեան ուսուցչական ինստիտուտի քննութիւնները: Աւարտեցին 16 հոգի, որոնցից 13 ուսու, 1 վրացի եւ 2 հայ, այն է՝ Մանասեան Սարգիս, Զարգալու գիւղից (Գանձակի գաւառ) եւ Թիֆլիսի Ալեքսանդր (Շամախի քաղաքից): Աւարտողներից 6 հոգի սովորել են ուսումնասիրանի հաշուի եւ պարտաւոր են ծառայել 6 տարի այնտեղ, որտեղ կը նշանակէ նրանց ուսումնական վարչութիւնները, իսկ մնացած 10 հոգին սովորել են իրանց հաշուի:

Ստացանք «Знамя» հրատարակչական ընկերութիւնից Մակսիմ Գորկիի գրուածքների չորրորդ հատորը, որի մէջ տպված են «Θομα» «Торжество» եւ «Двадцать шесть и одна» վէպերը: Զորրորդ հատորը, որ բաղկացած է 402 երեսից, արժէ 1 ռուբլի:

Բագուի բէլալական դպրոցում ուսումնաւարտել են այս տարի 24 անձինք, որոնցից 8 հայ, այն է Ա. Թարագաբեան, Լ. Թաղանտ-

բօպայանի վրա, որոնք, չը նայած իրանց ստացած արտօնութիւններին, չեն կշտանում, այնքան ազաւ են, որ նոր եւ նոր պահանջներ անում ու այդպիսով սարսափելի թոյն են մտցնում չինական ժողովրդի կեանքի մէջ: Թէեւ—ասված էր այդ հրովարտակի մէջ—բարբարոսները արժանի են, որ նրանց անխնայ ոչնչացնեն, բայց երկրի որդին իր գլխարկով իրանցից պատրաստ է նրանց ներել, եթէ բարբարոսների «առաջնորդները կը փոխեն իրանց վարքը, եւ հեղութեամբ կը մօտենան, ցոյց տալով յարգանք: Մի եւ նոյն ժամանակ անգլիական եւ ֆինանսական զեպանները Շանհայից Պէկին ուղարկեցին մի վերջնագիր, որով պահանջում էին չինական իշխանութիւնների ամենախորին ներողութիւնը այն գործերի համար, որ կատարել էին չինացի զինուորները Տակուի մօտ, վարձատրութիւն պատճառած բոլոր վնասների համար եւ ընդունել իրանց մեծ հանդէսով Պէկինում: Այդ վերջնագրին չինական կառավարութիւնը չը պատասխանեց, ուստի Անգլիան եւ Ֆրանսիան Չինաստան ուղարկեցին իրանց նոր ներկայացուցիչներին, որոնք էին լորդ Էլֆին եւ բարոն Գրօս: Սրանք հասան Հոնկոնգ 1860 թւի յունիսին, ունենալով իրանց հետ 260 նաւ եւ 30 հազար զինուոր:

սեան, Ա. Մանուշարեան, Ն. Զալախանց, Գ. Մահալեան, Յ. Տէր-Պաշտարեան, Մ. Տէր-Յովսէփեան եւ Տ. Բալասթար:

ԱնԱՆՏԱՅՈՒՅՑ մեզ հաղորդում են. «Այս տարի հացահատիկները զարգանում են կանոնաւոր եւ աջող կերպով: Առատ անձրեւների պատճառով այս տարի չէ զգացվում ջրի պակասութիւն: Խոտանարքը եւ լեռնային արօտները առատ են բուսականութեամբ: Այգիները առայժմ անվնաս են մնացել կարկուտից եւ ուրիշ վտանգաւոր պատահարներից:»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ (հեռագրով)

ՊԵՏԵՐԲՈՒԳ. «Չինաստանից առաջին երկու շաբաթ տեղեկութիւններն ստանալու օրից Կայսերական կառավարութիւնը չը յապաղեց Պէկինի իր ներկայացուցչի միջոցով պահանջել չինական միջնորդներից՝ կտրական միջոցներ ձեռք առնել հանգստութիւնը երկրի մէջ վերականգնելու համար: Իսկական պետական խորհրդական Գիւրիսի գրաւ հետ միասին յանձնարարվում է ցզուդ-ի-համէնի ամենալուրջ ուշադրութիւնը հրաւիրել այն վտանգաւոր բարդութիւնների վրա, որոնց անխուսափելի հետեւանքը կը լինէր ժողովրդական յուզումնք Չինաստանում ապրող օտարահպատակների դէմ, եւ պատասխանատու անել կառավարութեան անդամներին ծագած անկարգութիւնների հետեւանքների համար: Դժբաղդաբար, չինական գաւառական պաշտօնականների անհոգութիւնը ապստամբները խրախուսանք համարեցին իրանց յանցաւոր գործունէութեան, որը մասաւանդ համակրութիւն գտաւ կառավարչական զօրքերում: Ապստամբութիւնը օրից օր աւելի մեծ չափի սկսեց աճել: Մայիսի 25-ին «Մեծ ընտնացի» խմբերը այրեցին ուղղափառ եկեղեցին Դունտիսան գիւղում եւ սպառնում էին հրդեհել առաջին հոգեւոր միսիսի չինութիւնը: Հիւսիսային Չինաստանում բնակվող ուսանողականների կեանքը եւ գոյքը ինքնակրթված էին լորդ վտանգի, այն ինչ միջոցներով արամագրութեան տակ դնում էր միայն 75 մարդուց բաղկացած մի փոքր զէսաւոր, այդպիսի պայմաններում այլ եւս հնարաւորութիւն չը կար ուշացնել կորական միջոցների ձեռք առնելը. այդ տեսակէտով, Բարձրագոյն հրամանով, Կվանտունեան չըջանի հրամանատարին հրամանագրվեց պատրաստ պահել չորս հազար մարդուց բաղկացած զօրաբաժին, անհրաժեշտութեան դէպքում Չինաստան ուղարկելու համար առաջին գեպանի հէնց առաջին պահանջի համաձայն, բայց որովհետեւ դրանից յետոյ բոլոր յարաբերութիւնները մեր միասին հետ ընդհատվեցին, այն ինչ Շանհայից ստացված հեռագիրները հաղորդում էին, որ «Մեծ ընտնացի» խմբերը կենտրոնանում են մայրաքաղաքի մօտ եւ զիտաւորութիւն ունեն յարձակում գործել օտար միսիսիների վրա,—իդիս-ժողովրդական Ալեքսէնով հրաման ստացաւ անպաղաղ ուղարկել վերոյիշեալ զօրաբաժինը նշանակած տեղը: Ամսի 30-ին Տեանցիլին եկած առաջին էլէգիոն, 2000 մարդ, տեսաւ երկաթուղիական ճանապարհը:

Թողնելով փոքրիկ բերդապահ զօրաբաժիններ հարաւային Չինաստանի զանազան կողմերում, միացեալ զօրաբանակը առաջ արշաւեց, գրաւեց Տօնկու եւ Տակու ամբարացած քաղաքները եւ անարգել մտաւ Տեանցիլի քաղաքը: Սեպտեմբերին զօրքը արդէն Պէկինի ճանապարհին էր եւ գրաւեց Խօ-սի-վու ամրոցը, որ բազմամարդ Տուն-Չօու քաղաքից 7 վերստ հեռու էր: Այս վերջին քաղաքում հաւաքվել էին չինական զօրքերը եւ կայսրի լիազօրները, որոնք եկել էին բանակցութիւն սկսելու լորդ Էլֆինի հետ: Լորդն ուղարկեց իր կողմից իր թարգման Պարկիսին, Բայց այս պատճառաւորը չուտով համոզվեց, որ չինացիները ուզում են խորամանկութեամբ ժամանակ վատտակել ապագային բանակցութիւններով, ուստի վճռեց վերադառնալ անգլիական բանակը. բայց նրան ճանապարհին ձերբակալեցին եւ ուղարկեցին բանտ: Չինական զօրքերի համախառն ամբողջ ժամանակ վերեւ իջված իշխան Սան-կօ-լին-սին էր: Թէեւ նա մի քանի անգամ յաղթվել էր եւրօպացիներից, բայց եւ այդպէս, նա միակ ընդունակ հրամանատարը Չինաստանում: Նա համոզում էր բողոքիւններ թողնել Պէկինը եւ որսի պատրուակով հետանալ Մօն-գօլիս. ինքը, բողոքիւններ, հրովարտակ արձակեց, թէ իր զօրքի գլուխն անցած ինքը կը

եւ հեռագրութիւն աւերված: Տեանցիլին վրա մերձեցող ապստամբները երկու անգամ յարձակում գործեցին եւրօպական թաղերի վրա, սկսելով չինական քաղաքի եւ տեղական ընդհանուր-նախապաշտի տան հրդեհումով: Մեր դաշտային զօրաբաժինը, ոչինչ կորուստներ չը կրելով, յետ մղեց երկու յարձակումից եւ ապստամբներին համար մեծ կորուստով, որոնց խմբերը մինչ այդ կարողացան գրաւել Տակուի ծովածոցի բոլոր մարտկոցները, որպէս զի թէ ուսանելի, թէ ուրիշ պետութիւնների զօրքերին պաշար եւ օգնական զօրքեր ստանալու ճանապարհը կտրեն: Այդ հանգամանքը զրգեց միջազգային զօրքերին, ամենից առաջ, ապահովել ծովից մօտենալու ճանապարհը եւ այդ նպատակով հարկադրել ապստամբներին Տակուի ամրութիւնները յանձնել: Չինական ապստամբների սկսած կռիւ հետեւանքները յայտնի են արդէն: Տակուի ամրութիւնները գրաւելուց յետոյ առաջ զօրաբաժինը կարող է սկսել իրագործել նրա վրա դրված յանձնարարութիւնը՝ ապահովելու ուղղակի յարաբերութիւնները Կայսերական միսիսիի հետ եւ պաշտպանելու ուսանողականներին: Բոլոր վերոյիշեալից պարզ երեւում է, որ առաջ զօրքերը, մտնելով հարեւան երկիրը, ամենեւին թշնամական որ եւ է նպատակ չունեն Չինաստանի վերադարձումը. ընդհակառակը, նրանց ներկայութիւնը բարեկամ երկրի մէջ ներկայ խողովոյց անցքերի ժամանակ կարող է միայն իրական օգնութիւն հասցնել Պէկինի կառավարութեանը ապստամբների դէմ կռիւ մէջ եւ արագացնել կայսրութեան մէջ իրերի օրինակեան կարգի վերականգնումը նոյն ինքն Չինաստանի շահերի տեսակէտից:

ՄՇԱԿԻ՝ ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ

ԻՌԻՍԱՅ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

9 յունիսի
Բէվէլ: Այստեղ եկաւ ծախային վարչութեան կառավարիչը՝ Նաւահանգիստը քննելու համար: ԶԻՖՈՒ: Տեղեկութիւն է ստացված, որ երկու օրվայ ընթացքում Տեանցիլին ինքնակրթված էր ամբարկութեան կորուստների մօտաւորապէս հարիւր մարդիկ են: Լուրերին նայելով, Սէյմուր ստիպված էր Տեանցիլին վերադառնալ:

Պէկինից արդէն երկու շաբաթ է տեղեկութիւններ չը կան:

ԵՅԿՈՀԱՄԱ: Վարձված են 15 փոխադրող նաւեր. 4 զինուորական նաւեր գնում են Չինաստան, իսկ 12 ուրիշ նաւեր կազմ են պատրաստ սպասում են: Այդ նաւերը դէպի Ֆօր-ձօգա կուղարկվին: Ընթացքում 18 նաւեր են պատրաստված: Երեւի Չինաստան կուղարկվին աւելի էլ շատ զինուորական նաւեր:

ԲԻՐԻՍԷԼ: Չինաստանից ստացված տեղեկութիւնների համաձայն, միջազգային զօրաբաժինը, միաժամանակ առաջին անգամ զօրաբաժինի հետ, մասա Պէկինի Դիպլոմատիական միսիսիները չը վնասվեցին:

ՇԱՆԳՀԱՄԱ: Թունիսի 15-ին «Մեծ ընտնացի» խմբերը յարձակում գործեցին Տեանցիլին վրա երկու կողմից: Առաջ նրանք ամբարկութեան իսկ յետոյ սկսեցին շարժվել դէպի օտարահպատակների բնակչութիւնը: Եր-

գնայ զգուշել ապստամբների դէմ: Սակայն կազմվեց մի կուսակցութիւն, որ համոզեց բողոքիւններ չը թողնել իր ժողովուրդը, տաւարները եւ նախնիների գերեզմանները, յուսահատութեան չը հասնել: Եւ երկնքի սիրտը վճռեց մնալ Պէկինում:

Մի եւ նոյն ժամանակ լորդ Էլֆին, տեղեկութիւն չը ստանալով իր թարգման Պարկիսի մասին, առաջ տարաւ զօրքը դէպի Տուն-Չօու: Եւ հրամանատար Սան-կօ-լին-սին կռիւ բռնը վկայել, հինգ ժամ զինադրուց յետոյ, սարսափելի պարտութիւն կրեց: Չինական զօրքերը փախան իջվին պատգամաւոր ուղարկեց Պէկին, պահանջելով բաց անել քաղաքի դռները իր զօրքի համար պաշար պատրաստել եւ իւր կոյն վերադարձնել կալանաւորված եւրօպայիներին: Պատասխան դարձեալ չը ստացվեց: Բողոքիւններ, պարտութեան պատճառով հետանցել էր Մօնգօլիս, յանձնելով պետութեան կառավարութիւնը իր հօրեղբորը Դաշնակից զօրքերը ճանապարհ ընկան դէպի Պէկին եւ ֆրանսիական զինեալ Մօնտորան հակառակորդ 6-ին գրաւեց Իւէն-մին-լէն անունով կայսերական ամարային սպառտը, որ հաշակված էր իր հարստութեամբ եւ փառանք ճոխութեամբ:

(Կը շարունակվի)

կաթնուղիական կայարանը գրավեց ուսաց
քննադատներով, երբ «Մեծ բուռնցքը» բա-
կանց մասնակց կայարանին, ուսանողը 50
ոտմբեր արձակեցին: «Մեծ բուռնցքը» այդ
էջը ապաստում Ռուսների կրակը մեծ աւեր-
մունքներ գործեց նրանց մէջ: Յունիսի 15-ին
«Մեծ բուռնցքը» մեծ աւերմունքներ պատճա-
ռեց Տեանցղինի տեղական թաղի մէջ: Օտար
պետութիւնների զորքերն այնքան զօրեղ էին,
որ կարողացան պաշտպանել օտարահասակ-
ների բնակչութիւնները: Չինական մամուլը
Շանգհայում հաւատացնում է, որ մանչուերան
կուսակցութեան մէջ լուրջ երկպառակութիւն-
ներ սկսվեցին: Պէկինի պալատում իրարան-
ցում է տիրում: Կայսրուհի-ինամակալուհին
պատրաստում է փախչել, պրինց Տուան և
պրինցի կտրական հակառակորդներ են իւնգ-
լուի և նրանց, որոնք խորհուրդ են տալիս
գահին հաշտվել պետութիւնների հետ: Այդ
լուրերը հիմնված են գաւառական պաշտօնեա-
ների հաղորդագրութիւնների վրա:

ՇԱՆԳՀԱՅԻ, Հիւպատոսների հաւաքվեցին
խորհրդակցութեան: Այն կարծիքի վրա կանգ
առան, թէ Պէկինից տեղեկութիւնների բացա-
կայութիւնը վատ նշան է: Առեւտուրի դա-
շարման պատճառով, 20,000 կուլիններ առանց
հացի մնացին: Հիւպատոսները վճռեցին հեռա-
գրով դիմել Չիֆուի հիւպատոսների աւագին
և ինքրին, որ նա յարաբերութիւններ սկսի
Տակուի ծովալիսն ամենաաւագ օֆիցերի հետ:
անյապաղ օգնութիւն ստանալու համար: Հիւ-
պատոսները կարծում են, որ կարելի է ուղ-
ղակի հաղորդակցութիւն հաստատել Պէկինի
հետ և ինքրեցին չինական երկաթուղիների
գլխավորից համապատասխան տեղեկութիւն
տալ իրանց:

10 յունիսի
ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, Յունիսի 9-ին, արտաքին
գործերի մինիստրի երեկոյան հոգեհանգստին
ներկայ էին Թագաւոր Կայսրը, Մարիա Յիւ-
գորովնա և Ալեքսանդրա Յիւգորովնա Թա-
գաւոր-Կայսրուհիները, Մեծ Իշխանուհի Օլգա
Ալեքսանդրովնա և Մեծ Իշխան Միխայիլ Նի-
կոլաեվիչ:

Նշանակվում է արտաքին գործերի մինիստրի
օգնական կոմս Լաւրգորֆ արտաքին գործերի
մինիստրութեան ժամանակաւոր կառավարիչ:
Փոխ-ծովապետ Ալեքսեյ Նեոպոլիտ Պորտ-
Արաուրից, յունիսի 7-ից. «Տակուում գրաւ-
ված են չինական չորս կործանիչներ և բա-
ժանված են այսպէս. մէկը մեզ, մէկը մէկ անդ-
լիսացիներին, ֆրանսիացիներին և գերմանա-
ցիներին: Անգլիական «Algerien» նաւի վրա
վերաւորված են երկու օֆիցեր և չորս նա-
ւատի. գերմանական «Itis» նաւի վրա սպան-
ված են մէկ օֆիցեր և մեկ նաւատիւններ,
վերաւորված են հրամանատարը և ութ նա-
ւատիւններ. ֆրանսիական «Lion» նաւի վրա
վերաւորված են երեք նաւատի:

Բորէրտո հեռագրում է Պրէտորիայից. «Գե-
ներալ Համիլտոնի զօրաւորը հասաւ Սպրինգ-
սին և գտնվում է Հէյդելբերգի ճանապարհի
վրա, որպէս զի միանայ Բուլլերի զօրքերի
հետ, որը երէկ հասաւ մինչեւ Պրէտորիայ:
Վաղը զօրաւորը կը լինի Ստանդերտօնում:
Հաղորդակցութիւն բանալու Պրէտորիայի և
Նաուայի միջև և արգելելու արանսիական
և օրանսիան բռնիների միացեալ գործողու-
թիւնը: Բաղէն-Պաուէլ հաղորդում է Ռուս-
տերբուրգից, որ Պրետորիայից վերադառնալու
ժամանակ նա բռնիներին տեսաւ խաղաղ տրա-
մադրութեան մէջ: Նրա բացակայութեան ժա-
մանակ գերի են վերցված հրամանատար Ստէյն
և երկու ֆէլդֆելդաւ Ռուստէնբուրգից: Այդ-
մինիստրատորին յանձնված են 3000 հրացան-
ներ»:

Բուլլեր հաղորդում է Կատարուից. «Հետեւակ
Զորքը, անցնելով 22 մղոն, եկաւ այստեղ, գի-
մադրութեան չը հանդիպելով և գրաւեց Ստան-
դերտօն: Թշնամին յետ քաշվեց, օղը թողնելով
երկաթուղիական կամուրջը և ուրիշ վնասներ
հասցնելով»:

10 Նոյեմբ. Մոտ հազար նաւատիւններ և ծո-
վային զինուորների մեծ զօրաւոր միութե-
անուրից գնում են դէպի չինական կայարան:
Պէկինում հրաման է ուղարկված անյապաղ
պատրաստել ծովային արտիլերիա և հետեւակ
զօրք:

ՊՈՐՏ-ՎԻԿՏՈՐԻԱ, Բժշկի որոշմամբ, խէղիւր
հիւանդ է կոկորդի վարակիչ բորբոքումով:
Չիֆուի, Պաշտօնապէս հաղորդում է, որ
Տեանցղին ուժակոծվում է անդադար մեծ թըն-
դանօթներով: Արտաօտանման կօնցէսիաները
համարեա բոլորը այրված են, ամէրիկական
հիւպատոսարանը քարուքանդ է արված: Ան-
հրաժեշտ են օգնական զօրքեր. կորուստները
ծանր են:

ՆԻՒ-ԵՐՈՒԿ, Մետոգիստների միաժողովական
ընկերութեան քարտուղարը ստացաւ հեռագիր,
որ ստորագրել են ակնանաւի վրա ազատված
միաժողովները: Այդ հեռագրից երեւում է, որ
Տեանցղինում եղած նոյն միաժողի միացած
24 միաժողիները սպանված են: Նրանց թոււմ
կանայք էլ կային:

ԲԵՐԼԻՆ, Կրէյտերեան նաւատորմի հրամա-
նատարը Տակուի մէջ հաղորդում է յունիսի
7-ին, որ ինչպէս հաղորդեց Տեանցղինից եկած
ֆրանսիական օֆիցերը, չինական զօրքերը ար-
դէն երեք օր է ամբակոծում են Տեանցղինը:
Պատերազմական նիւթեր սակի են քաղա-
քում: «Tren» նաւը եկաւ Տակու. 240 զին-
ւորներով, որոնք անյապաղ ճանապարհ ընկան
դէպի Տեանցղին 380 անգլիացիներով և ուս-
սաց մեծ զօրաւորմամբ: Երկաթուղիով կարելի
է անցնել 15 կիլոմէտր դէպի Տեանցղին: Պէ-
կինից այնտեղ ուղարկված զօրքերի մասին ո-
չինչ տեղեկութիւններ չը կան: Վերաւորված-
ների գրութիւնը գտնացուցիչ է:

10 Նոյեմբ. Համայնքների ժողով. Բրոքրիկ
յայտնում է, որ Պէկինից ոչինչ տեղեկութիւն-
ներ չեն ստացված Սէյմուրից: Յունիսի 5-ին
Տեանցղինից դուրս եկած սուրհանդակ տե-
ղեկութիւն բերեց Տակու, որ Տեանցղինի վրա
մի քանի յարձակումներ են տեղի ունեցել,
բայց նրանք յետ են մղվել: Յունիսի 4-ին չի-
նացիները ուժակոծում էին օտարահասակ-
ների թաղը: Միջապալին զօրաւորմանը, թուլ
175 մարդ, բաղկացած աւստրիացիներից, անդ-
լիսացիներից, գերմանացիներից և իտալացինե-
րից, յարձակում գործեց չինական զինուորական
ղլարիցի վրա, աւերեց նրա թնդանօթները,
սպանեց զարմի պաշտպաններին և այլոց
նրան իր բոլոր հրազէն պաշարների հետ միա-
սին Ռուսներն իրանց դաշապին չորս թնդա-
նօթներով առանձնապէս քաջութիւն ցոյց
տուին այս գործում: Անգլիացիներից վերա-
ւորվեցին 6 և սպանվեց մէկ մարդ: Գիշեր-
վայ ընթացքում յունիսի 4-ին չինացիները
փորձ էին անում տիրել կամուրջին, բայց յետ
մղվեցին կորուստներով, այնպէս որ սպանվեց
նրանց գեներալը: Ապա բրիտանական փոխ-
ծովապետը հեռագրում է երէկվան երեկոյից,
թէ սուրհանդակները նոր տեղեկութիւններ են
բերել Տեանցղինից յունիսի 7-ից, հաղորդելով,
որ կորել շարունակվում է: Օգնական զօրքեր
անհրաժեշտ են: Վերջապէս փոխ-ծովապետից,
Տակուից, ստացված է հեռագիր երէկվան թը-
ւով. «Յոյս ունեմ, որ Տեանցղինը կազատվի
այս գիշեր: Գլխաւոր հրամանատարից տեղե-
կութիւններ չը կան: «Terrible» նաւից այսօր
առաւօտեան ափ են իջեցրված 382 մարդիկ»:
Վերջին հաղորդագրութեան առիթով Բրոքրիկ
նկատում է, թէ պէտք է կարծել, որ մէկ եր-
կու օրից յետոյ կը գան էլի զանազան զօրա-
ւորմաններ, թէ՛ արդէն չին եկել Բրիտանա-
կան կառավարութիւնը միջոցներ է ձեռք ա-
ռել նշանաւոր կերպով լրացնելու այն զօրա-
ւորմանները, որոնք արդէն հրաման են ստա-
ցել գնալ Չինաստան:

Կ. ՊՈԼԻՍ, Սուլթանը ջերմ ցաւակցութիւն
յայտնեց ուսաց գեապանին Մուրադիէվի մահ-
վան առիթով:

ՊԱՐԻԶ, Ինվալիդների հրապարակի վրա, իշ-
խան Տէնիշէվի ներկայութեամբ, ցուցահանդէ-
սում բացված է Մարիա Կայսրուհու հիմնա-
րութիւնների պալատիկը:

10 յունիսի
ԽԱՐԿՎՈՒ, «Южн. Край» լրագրին հաղոր-
դում են, որ բրդի ընկերութեան գիրկէն
Ստարովսկի վատնել է 120,000 ռուբլի, համա-
րեա ամբողջ առձեռն գումարը: Ընկերութեան
ընդհանուր ժողովը հրաւիրվում է յունի-
սի 26-ին:

Բերված կալ մօտ 130,000 պուդ կեղտոտ
բուրդ, Շուկայի արամադրութիւնը աւելի նը-
պատաւոր է գնողների, քան թէ ծախողների
համար: Բուրդը ծախվում է 8-ից մինչեւ 10 ռ-
բլին:

ԲԵՐԼԻՆ, Գերմանական հիւպատոսը հեռագ-
րում է Չիֆուից. «Itis» նաւի կորուստների
մասին. սպանված են եօթ մարդ, որոնց թոււմ
բէյլանաւոր իշխան, վերաւորված են 14, ո-
րոնց նաւի հրամանատարը ծանր կերպով:
Այստեղի չինական գեապանը հաղորդեց ար-

տաքին գործերի մինիստրութեանը, որ գեր-
մանական գեապանը կենդանի է, ամբողջ և ա-
պահով:

Ապա Չիֆուի գերմանական հիւպատոսը հե-
ռագրում է, որ եւրօպական բնակչութեան
ոմրակոծումը Տեանցղինում շարունակվում է:
Շինութիւնների մեծ մասը այրված է: Պէկի-
նից ոչինչ տեղեկութիւններ չը կան:

10 Նոյեմբ. Հեռագիրը Շանգհայից հաղորդում
է, որ օտարահասակների կօնցէսիական հա-
մարեա բոլոր բնակչութիւնները վէյ-Պայ-Վէ-
յում այրված են:

ՎԻԵՆԱ, «Neue Freie Presse» լրագիրը հա-
ղորդում է, որ Բելլինի չինական գեապանու-
թիւնը Լիխտնշտայնից ստացաւ հեռագիր, որի
մէջ վերջինս տեղեկացնում է, որ գնում է
Պէկին միջնորդի դեր ընդունելու համար պե-
տութիւնների և Չինաստանի միջև: Հեռա-
գրում ցանկութիւն է յայտնվում, որ պետու-
թիւնները, այդ միջնորդութիւնը դուրսցնելու
համար, լաւ կը լինէր, որ զաղարէին առ այժմ
օգնական զօրքեր ուղարկել: Բացի դրանից
Բելլինի չինական գեապանը հեռագիր ստացաւ
չինական երկաթուղիների և հեռագրատների
գիրկէնտուրից, որի մէջ հաղորդվում է, որ օտար
պետութիւնների ներկայացուցիչների դուր-
սիւնը Պէկինում լաւ է:

ԲԵՐԼԻՆ, «Վոլքի» գործակալութիւնը հաղոր-
դում է. «Չինական գեապանութիւնը յայտնում
է մեզ Վիէնայի հաղորդագրութեան առիթով,
որ վերաբերում է Լիխտնշտայնից, թէ Լի-
խտնշտայնից ի նկատի ունի առաջ ճնշել «Մեծ
բուռնցքը» ապստամբութիւնը և ապա սկսել
միջնորդութիւնը Չինաստանի և պետութիւն-
ների միջև»:

ՆԻՒ-ԵՐՈՒԿ, Մետոգիստական միաժողովների
ղեկավարը Տեանցղինում Չիֆուից հետեւեալ
հեռագիրն ուղարկեց. «Հէնց նոր ազատվեցի
Տեանցղինից գերմանական մարտնաւակի վրա:
Չինական զօրքերն արդէն մի քանի օր է որմ-
բակոծում են Տեանցղին: Օտարահասակների
բնակչութիւնը քարուքանդ է արված: Ամէրի-
կական նաւատորմի լէյտենանտ Րայտ և մեզ մօտ
ուղարկված ծովային հետեւակ զօրքի 50 զին-
ւորներ մասամբ սպանված են և մասամբ վի-
րաւորված. պատերազմական նիւթը սպառ-
ված է. բերդապահ զօրքը ստատիկ տանջվում
է. օգնութիւնը անմիջապէս անհրաժեշտ է»:

ՇԱՆԳՀԱՅԻ, Հիւպատոսի չինական զօրքերը
45 արագածիք թնդանօթներով, Տուանի հրա-
մանատարութեամբ, յարձակում գործեցին
Տեանցղինի վրա: Մինչեւ այժմ չինացիներին
չաղովելից դրաւել քաղաքը, բայց չինական
թնդանօթների կողմից շատ վնաս հասցրեց:

Պէկինից ստացված վերջին արժանահաւատ
տեղեկութիւններից երեւում է, որ գեապանա-
սանքը կանգուն են:

ՀՈՆԿՈՒԿ, Լիխտնշտայնից հաղորդում է, որ
կայսրուհուց հրաման ստացաւ գնալ Պէկին:
ապստամբութիւնը ճնշելու և խաղաղութիւնն
ու համաձայնութիւնը վերականգնելու: Չինա-
ստանի և Եւրօպայի միջև: Նա ճանապարհ է
ընկնում յունիսի 14-ին Կանտօնից Հօնգկոնգի
և Շանգհայի վրայով:

10 Նոյեմբ. Պրէտորիայից, յունիսի 6-ից, հե-
ռագրում են, որ Բուլլեր, Բրաբանտ և Բէյդ
գեներալների ոյժերը կամաց կամաց ցան-
ցով պատեցին Դէվէտի գիւղը. հարկաւոր
դէպքում Համիլտօն ևւ կը միանայ նրանց
հետ: Բոտա յայտնեց, որ ինքն տրամադրի է
անձնատուր լինել, բայց դիմադրութիւն է
գտնում Կրիւքսի կողմից, որը պնդում է այն
բանի վրա, որ իրան թոյլ տրվի մնալ երկրում:
Դէվէտի գործողութիւնները հիմք են ծառա-
յում Բոտայի գիմադրութեան համար:

ՊԱՐԻԶ, Արտաքին գործերի մինիստրը գի-
շեր մի քանի հեռագիրներ ստացաւ: Շանգ-
հայի հիւպատոսը հաղորդում է, որ չինացինե-
րը ուժակոծում են Տեանցղինը և որ ամէրի-
կական հիւպատոսարանը քարուքանդ է ար-
ված: Դեռ էլի տեղեկութիւններ չը կան Պէ-
կինից:

10 Նոյեմբ. Բրիտանական կառավարութիւնը
թոյլատրեց այն բոլոր զինուորական նաւերին,
որոնք լողում են Չիֆուի և Տակուի միջև,
ընդունել հեռագրիւններ:

ՊԱՐԻԶ, Բիւրօյաւան լանձնատնօղովում Լա-
նէսան յայտնեց, որ չինական անցքերի առի-
թով իր պահանջած կրէդիտը կը թոյլ տայ պա-
հել Տակուի մէջ 3500 մարդ, նոյնքան զօրք,
որքան պահում են ուրիշ պետութիւնները:

ՇԱՆԳՀԱՅԻ, Չիֆուից հաղորդում են, որ
գործերի դուրսութիւնը Տեանցղինում կրիտիկա-
կան է, բայց ոչ անյուսալի: Գաղաքը ուժա-
կոծվում է, մի մասն էլ բոցերի մէջ է. պաշտ-

պանները զգալի կորուստ կրեցին: Անցեալ օրը
ազատելու համար գնացին 2000 մարդիկ: Ա-
մէրիկական հիւպատոսը Տակուում հեռագիր
ստացաւ, որ յունիսի 21-ին Տեանցղինն
ազատելու համար գնալ: Գնալ: Գորաւորներ
ստիպեցին էր յետ քաշվել, բայց ուր-
աթ գիշեր, օգնական զօրքեր հասնելուց
իւտոյ, նա վերսկսեց յարձակումը: Նանկինի
փոխարքան հեռագրեց, յունիսի 20-ից, որ
դիպլոմատական միասին Պէկինում ապահով
է և գեապաններն ամբողջ են:

12 յունիսի
ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, Հրատարակված է հետեւեալ
Բարձրագոյն հրովարտակը: «Անհրաժեշտ հա-
մարելով պատերազմական դրութեան մէջ դը-
նել Պրիմուրեան զինուորական չրջանի զօր-
քերը» Մենք հրամայում ենք զինուորական մի-
նիստին այժմէն իսկ անկ բոլոր հարկաւոր
կարգադրութիւններն ըստ Մեր ցուցման: Արա-
հետ միասին հրամայում ենք՝ ներգործական
պաշտօնի կանչել բաւական թուով Պրիմուրե-
ան և Սիբիրական զինուորական չրջանի նա-
հանգներից և գաւառներից:

Յունիսի 11-ին, Կէսօրից յետոյ 4 ժամին
կատարվեց կոմս Մուրալիօվի մարմնի յու-
ղարկաւորութիւնը դէպի Բալտիկ երկաթու-
ղու կայարանը. ապա մարմինը գնացքով փո-
խադրվեց Սերգիեվ կայարանը, որտեղից դա-
ղաղը տարվեց Սերգիեվսկի անապատը և
զրվեց Կուշելեվսկի եկեղեցում:
ՊԵՐՄ: Բացվեց փոխտուռ-ինսպեկտոր ըն-
կերութիւնների ներկայացուցիչների ժողովը:
Երեկոյան ժամանեց ֆինանսների մինիստրի
օգնական Կոկովցիվ:

ԿԻԵՎ: Անձրեւների առատութեան պատճա-
ռով լուրջ կասկածներ են ծագում աշնանա-
ցանների մասին Կիւլի նահանգի հարաւային
մասում: Պոգոբեան նահանգում երաշուութիւն
է տիրում: Շատ տեղերում աշնանացանների
վրա բլէզ յայտնվեց:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, Երկրագործութեան մինիստր-
ի օգնական հօֆմէյստէր Ստէվեն եկաւ հան-
քային ջրերը նայելու:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, Պարիզից, Բելլինից և Վիէն-
նայից հեռագիրներ են ստացված կոմս Մու-
րալիէվի համար կատարված հանդիսաւոր հո-
ղեհանդիսանքի մասին ուսաց գեապանական
եկեղեցիներում:

ԼէՊիտի: Շարլ Դիւալիւի սենատոր է ընտր-
ված:

ԿԻՒ, Կայսրը «Itis» մարտնաւոր հրամանա-
տարին չորհեց Pour le mérite շքանշան:
ԿԻԵՎ, Կատարվեց միտրօպոլիտ Եօնիլիի
թաղում: Ներկայ էին իշխանութիւնները և
մագմամարդ ժողովուրդը:

ՇԱՆԳՀԱՅԻ, Պրինց Տուան արձակեց հիւպիսի
զօրքերի հրամանատար Իւնգլուին և ինքն յանձն
առաւ հրամանատարութիւնը, նախապէս յայ-
տարարելով, որ Տեանցղինի վրա կարչաւի և
կարտաքէ այդ քաղաքը գրաւող մի բուռն
օտարահասակներին: Պէկինից ստացված վեր-
ջին տեղեկութիւնների համեմատ, զիպոմա-
տիական միասինները դեռ գիմանում են: Նը-
րանք չը շարժակալված են չինացիներով, որոնք
չին համարձակվում սակայն յարձակում գոր-
ծել նրանց վրա, այլ յոյս ունեն սովամահ ա-
նել: Հաղորդում են, որ կայսրուհին հրաման
արձակեց բոլոր օտարերկրացիներին ընաջինջ
անելու մասին: Տեանցղինից ստացված տեղե-
կութիւնների համեմատ, հաստատվում է այն
լուրը, որ գեներալ Նիշ ուժակոծում էր օտար
կօնցէսիաները Ռուսներն ընկնում էին հասա-
րակական այգին, ուր ապաստան գտան կա-
նալը: Կոտորածին կարող են դիմադրել միայն
3000 օտարահասակ զօրքեր:

ԿԱՊԵՏՈՒՐ: Օրանսիան գետից դէպի հիւ-
սիս ապստամբութիւնը վերջացած է: Դէվիլէի
բանալը, որ բաղկացած էր 220 մարդուց,
280 ձիով, 18 վազօնով, 260 հրացանով և
100,000 փամբուշտով՝ եկաւ Բլիկֆօնտէն և
անձնատուր եղաւ Ուոտնէին: Բանալում գրաւ-
վում էին ապստամբները 16 ներկայացուցիչ-
ներ: Ինքը Դէվիլէին անհիշաւ զօրագնացով հե-
ռացաւ արեւելեան ուղղութեամբ:

ՎԱՇԻՆԳՏՈՆ: Ամէրիկական զինուորական ոյ-
ժերը Չինաստանում պէտք է բաղկանան 4500
մարդուց, մի բաւարկելով, Հալլ գեներալի հրա-
մանի տակ, 16 մեծ նաւերից և 500 նաւատ-
իներից: Կեմպֆի հրամանի տակ: «Մոնտրօսի»
աշտարակաւոր նաւը հրաման ստացաւ մեկնե-
լու դէպի Տակու:

Հօնկոնգից հեռագրում են, որ Սէյմուր ծո-
վապետը պաշարել է Պէկինի թափարական
մարդ:

ՍՕՅԻԱ: Մայր եկեղեցում հոգեհանգիստ
կատարվեց գրաֆ Մուրալիօվի համար:

